

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է Նախարարությունում քաղաքացիական ծառայության հետևալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

### **Գիտության և խորհրդարկության վարչության առաջարար մասնագեր** **(30-3.2-181)**

#### **Առաջարար մասնագերը՝**

- 1) մասնակցում է գյուղատնտեսական խորհրդատվական բնույթի աշխատանքներին.
- 2) մասնակցում է համայնքներ և անհատական տնտեսություններ այցերին, տվյալների հավաքագրման և վերլուծության աշխատանքներին.
- 3) մասնակցում է պետական օժանդակության ծրագրերի իրազեկման աշխատանքներին.
- 4) իրականացնում է քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

#### **Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝**

1) բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2019 թվականի հուլիսի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

2) ՀՀ Սահմանադրության, «Քաղաքացիական ծառայության մասին» «Օրգանական գյուղատնտեսության մասին», «Պարենային անվտանգության ապահովման» ՀՀ օրենքների, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «ՀՀ գյուղատնտեսության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 742-Լ որոշման և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

3) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

#### **Աշխարավարձը՝ 150,799 (հարյուր հիսուն հազար յոթ հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ**

Լրացուցիչ տեղեկությունների համար քաղաքացիները կարող են դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության անձնակազմի կառավարման բաժին /ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 011-52-58-57/:

**Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանվում է մինչև նշված թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:**

***Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝***

- գրավոր դիմում,
- անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճենը,
- սոցիալական քարտի պատճենը,
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
  - աշխատանքային գործունեության մասին վկայող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
  - արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
    - մեկ լուսանկար 3x4 սմ չափսի:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն աշխատանքային օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը:

***Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 14.05.2019թ.***